

ԱՖՐԻԿԱՅՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

Ժաննա Հարուբյունյան

Բանալի բառեր՝ Ֆրանսիա, Աֆրիկա, գաղութային քաղաքականություն, տնտեսական շահ, ձուլման քաղաքականություն, պաշտպանական պայմանագրեր, Ֆրանկոֆոնիա, ռազմական միջամտություն:

Միջազգային ասպարեզում Ֆրանսիայի դերն ու ուժը ծևավորեցին վերջինիս արտաքին քաղաքականությունը Աֆրիկայի նկատմամբ: Իր քաղաքական և տնտեսական ուժով Ֆրանսիան իրենից մեծ ուժ էր ներկայացնում Եվրոպայում և աշխարհում: Ֆրանսիան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպական համայնքի վեց հիմնադիր անդամներից մեկն էր և առաջնորդող դեր էր իսպանացնում: Ֆրանսիան ազդում էր համաշխարհային քաղաքականաթյուն վրա նաև միջազգային կազմակերպությունների միջոցով. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և ՆԱՏՕ-ի մշտական ամսամքեր, անդամակցում էր նաև Մեծ 8-ին և Մեծ 20-ին:

Ֆրանսիան Աֆրիկայում վարում էր ռեալիստական արտաքին քաղաքականություն, համաձայն որի՝ պետությունները ծևավորում էին իրենց արտաքին քաղաքականությունը՝ ըստ իրենց ազգային շահի: Ֆրանսիայի հետաքրքրությունը Աֆրիկայի նկատմամբ սկիզբ է առնում 17-րդ դարից, երբ Արևմտյան Աֆրիկայի ավին (այսօր արդեն Մենեգալում) կառուցվեց արևմտրային նավահանգիստ:[1]

Եվրոպական նախկին գաղութային տերությունները, ներայալ Ֆրանսիան, ՄՊ, Գերմանիան, Իտալիան, Պորտուգալիան, Իսպանիան և Բելգիան, 1884-1885 թթ. ստորագրեցին Բեռլինյան ակտը՝ նպատակ ունենալով բաժանել Աֆրիկան և պաշտպանել իրենց տնտեսական և քաղաքական շահերը Բեռլինի կոնֆերանսում: 1884-1885 թթ. Բեռլինի կոնֆերանսը մեծ քաղաքական շրջադարձ էր Եվրոպայի գաղութային քաղաքականության և Աֆրիկայում նոր իմպերիալիզմ սկսելու ճանապարհին: Բեռլինի կոնֆերանսում գաղութատերերը արդարացնում էին իրենց դաժան գաղութատիրությունը Աֆրիկայում: Ֆրանսիայի գաղութային քաղաքականության հիմնակետը Աֆրիկայի հարուստ ռեսուրսների շահագործումն էր: [2]

Ֆրանսկոն Աֆրիկայի պետություններն էին Ալժիր, Մարոկո, Թունիս, Մավրիտանիա, Մենեգալ, Ֆրանսիական Սուլամնը (այժմ՝ Մալի), Գվինեա, Նիգեր, Վերին Կոլտա (այժմ՝ Բուրկինա Ֆասո), Դահոմեյ(այժմ՝ Բենին), Գաբոն, Միջին Կոնգո (Կոնգոյի Հանրապետություն), Ֆրանսիական Կամերուն, Սուլթանգի-Զարի (այժմ՝ Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն), Չաղ, Ֆրանսիական Սոմոլիանդ, Կոմորոս և Մադագասկար: Իր գաղութմերն ամրապնդելու հիմար Ֆրանսիան Աֆրիկայում կառուցեց երկու մեծ դաշնություններ՝ Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա, Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկա. Վերջինս այնուհետև դարձավ Ֆրանսիայի գաղութային կայսրության դաշնություն: Այն կազմում էր Դահոմեյ (այժմ՝ Բենին), Ֆրանսիական Գվինեա (այժմ՝ Գվինեա), Ֆրանսիական Սուլամն (այժմ՝ Մալի), Մավրիտանիա, Նիգեր, Մենեգալ, Վերին Կոլտա (այժմ՝ Բուրկինա Ֆասո): Առաջին դաշնային կառավարությունը հիմնվեց Մենե-

\* Հոդվածն ընդունվել է 20.11.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնը:

## ՄԵՐՈՐԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

գալում 1904թ.: Հետո հիմնվեց Ֆրանսիայի երկրորդ դաշնությունը 1910թ. և ներառում է Զադ, Գարոն, Կամերոն, Կոնգո, Կենտրոնական Աֆրիկյան հանրապետությունը: 1960 թ. Աֆրիկյան պետությունների անկախությունից հետո երկու դաշնություններն էլ կործանվեցին: [3]

Հատկանշական է նշել, որ Ֆրանսիայի գաղութային քաղաքականությունը Աֆրիկայում տարբերվում էր ՄԲ քաղաքականությունից: ՄԲ-ի գաղութային քաղաքականությունն ուղղված էր Աֆրիկայի տնտեսական շահագործմանը, այնինչ Ֆրանսիան իմբը դնում էր մշակույթային և քաղաքական ծովանակ վրա: Ֆրանսիայի ծովանակ քաղաքականությունն չէր հարգում Աֆրիկայի մշակույթը ու սովորությունները: Այն արգելում էր Աֆրիկային լեզուները, մշակույթը, ինքնությունը: ՄԲ իր գաղութաներին նայում էր որպես օտար հողերի, իսկ Ֆրանսիան՝ որպես իր մի մասնիկի: Դեռ ավելին՝ Ֆրանսիան պարտադրում էր Աֆրիկայում ֆրանսիական մշակույթը: [4]

Աֆրիկան գաղութացնելու համար Ֆրանսիան այնտեղ իմնում էր տնտեսական ու քաղաքական սեփական համակարգերը: Մինչ Ֆրանսիայի գաղութային քաղաքականությունը խաղում էր կարևոր դեր Ֆրանսիայի տնտեսական շահերի զարգացման հարցում, աֆրիկյան պետությունների տնտեսությունը անկում էր ապրում: Ֆրանսիան ստիպում էր իր գաղութաներին առևտուր անելու ոչ թե միջյանց հետ, այլ միայն Փարիզի հետ: [5] Գաղութները պարտավոր էին թանկ գներով ապրանքներ ներմուծել Ֆրանսիայից և էժան գներով արտահանել դեպի Ֆրանսիա: Այս համակարգը հանգեցնում էր Ֆրանսիայի և իր գաղութների միջև անարդար առևտուրային հարաբերությունների: [6]

Գաղութատիրության ժամանակահատվածում Ֆրանսիայի քաղաքականությունը հիմնված էր ռասիզմի և անհավասարության վրա: Աֆրիկայի բաժանման հարցում մեծ դեր էին խաղում Ֆրանսիայի առաջնորդները: Ֆրանսիան Աֆրիկյայում հաջողությամբ իրականացնում էր “բավկանիզացիայի” քաղաքականությունը՝ ստեղծելով դաշնային համակարգ: [7] Գաղութային պատմության ընթացքում «բաժանիր և տիրիր» քաղաքականությունը իրականացվում էր եվրոպական նախկին գաղութային պետությունների կողմից: Օրինակ, Ֆրանսիան բաժանեց Աֆրիկան որպես «Ֆրանկոֆոն», ՄԲ՝ որպես «Անգլիֆոն». Պորտուգալիան մասնաւոր այն որպես «Լուստֆոն»: Ի տարբերություն ՄԲ-ի, որն իրականացնում էր անուղղակի միջամտության քաղաքականություն, Ֆրանսիան իրակացնում էր ուղղակի միջամտության քաղաքականություն: Գաղութայնացված Աֆրիկայում Ֆրանսիան նախընտրում էր կենտրոնացման քաղաքականությունը, այդ իսկ պատճառով ֆրանսիական գաղութային քաղաքականությունը ավերիչ հետևանքներ էր ունենում: Աֆրիկայի գաղութայնացման հարցում ամենամեծ դերը խաղում էին Ֆրանսիայի ռազմական ուժերը: [8]: Մինչ 1960թ.՝ Աֆրիկյան գաղութների անկախացումը, Ֆրանսիան կար և մնում էր ամենաազդեցիկ գաղութատերը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Սառը պատերազմի ժամանակահատվածում, տարբեր միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններ հիմնվեցին, որոնք հետո պետք է դառնային հզոր ուժեր: Այսպիսիք էին՝ ՍՍԿ-ը, Վարչական Պակտը, ՆԱՏՕ-ն: Ի դեմք ԱՄՄ և ԽՍՀՄ-ի՝ ի հայտ եկավ Երկրներ համակարգ: Աֆրիկայի ապագաղութացումը սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և ակտիվորեն շարունակվեց 1960թ. Երբ Աֆրիկյան պետությունների մեծ մասը արդեն ձեռք էր բերել իր անկախությունը: Գլոբալ զարգացումներին համընթաց՝ Ֆրանսիան որդեգրեց նոր քաղաքականություն և նոր մեխանիզմներ, որպեսզի պահպանի և ուժեղացնի իր ազդեցությունը Ֆրանկոֆոն Աֆրիկյայում:

Սարցապատերազմյան ժամանակաշրջանում երկլողմ պայմանագրերի, ռազմական ներխուժման և ֆինանսասական աջակցության քաղաքականության միջոցով Ֆրանսիան

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

պահեց իր կապը Աֆրիկայի հետ: Այսպիսի քաղաքականությունը դրսևորվեց որպես Ֆրանսիայի գաղութային քաղաքականության շարունակություն: [9] Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը Աֆրիկայում, որը իմանված էր տնտեսական և քաղաքական շահերի պաշտպանությանը, մնաց անփոփոխ անգամ այն բանից հետո, երբ աֆրիկյան պետությունները ծեռք բերեցին իրենց անկախությունը: «Ֆրանսիա-Աֆրիկա» գաղափարի ստեղծման մեջ մեծ էր Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության առաջին նախագահ Գեներալ Շառլ դե Գոլի դերը: Այն իրենից ենթադրում էր Ֆրանսիայի գաղութային քաղաքականության շարունակություն: Զնայած նրան, որ ֆրանսիական նախկին գաղութները ստացան իրենց անկախությունը 1960թ-ին՝ ֆրանսիան շարունակում էր վերահսկողությունը ստրատեգիական նշանակության տարածություններում: [10]

Աֆրիկայում գաղութային քաղաքականության շարունակման նպատակով 1939թ. Ֆրանսիան ներմուծեց դրանավարկային քաղաքականությունը: CFA ֆրանկը հանդիս էր գալիս երկու տարբեր արժույթներով. Կրևուամն Աֆրիկայի CFA ֆրանկ և Կենտրոնական Աֆրիկայի CFA ֆրանկ: Երկու արժույթներն էի ունեն ֆիքսված փոխարժեքներ եվրոյի նկատմամբ: Ֆրանսիան վերահսկողության տակ էր պահում Աֆրիկայի գաղութների արժույթային և ֆինանսական քաղաքականությունը: Աֆրիկան 14 պետությունների մինչ այսօր օգտագործում են ֆրանսիական արժույթը: 1994թ. CFA ֆրանկը մոտ 50 տոկոսով արժեգրկվեց Ֆրանսիայի կողմից: Այդ արժեգրկումը լուրջ խնդիրներ առաջացրեց ֆրանկո-աֆրիկյան հարաբերություններում և լուրջ վնասեցին ֆրանկո-աֆրիկյան դրամավարկային քաղաքականությանը: [11] Այդ քայլը նաև սրեց տնտեսական անկայությունը ֆրանկոֆոն Աֆրիկայում: [12]

Սարդ պատերազմի տարիներին Ֆրանսիայի աֆրիկյան քաղաքականությունում գերակշռում էր ռեալիստական մոտեցումը: Պազմական մերխուժումների միջոցով Ֆրանսիան ընդայնեց իր ազդեցության տարածքները Աֆրիկայում: Այդ շրջանում ֆրանկ-աֆրիկյան հարաբերությունները որակվում էին որպես «ներկողոնիալիզմ»: Այս տերմինը սահմանվեց 1961թ. Կահիրեում՝ աֆրիկյան ժողովուրդների կոնֆերանսում:

Գաղութային համակարգը շարունակում էր գործել՝ չնայած աֆրիկյան պետությունների քաղաքական անկախությանը:

1963-1983թթ., իր շահերից ելեկով, Ֆրանսիան 20 անգամ ռազմական մերխուժման է ենթարկել Աֆրիկայի տարբեր պետությունների [13] (Տե՛ս այլուսակ 1):

Ֆրանսիայի հետզագութային քաղաքականության ամենագիսավոր բնորոշ գիծը կախվածությունն էր Աֆրիկյան պետություններից և՝ քաղաքականապես, և՝ տնտեսապես: Ֆրանսիայի և Աֆրիկայի հարաբերություններն ավելի են ամրապնդվում Ֆրանկոֆոն Աֆրիկայի ստեղծմամբ: Օրինակ՝ Աֆրիկյան և Մալագասի միությունը, ստեղծվելով 1961թ., ավելի էր ամրապնդում քաղաքական և տնտեսական կապը Ֆրանսիայի և իր նախկին գաղութների միջև: Կազմակերպությունը լուծարվեց 1985 թ. [14] Նախկին գաղութների հետ քաղաքական, տնտեսական, պատմական կապը պահպանելու նպատակով 1970թ. Ֆրանսիան հիմնեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը: Կազմակերպությունը գագաթաժողովներ էր հրավիրում 2 տարին մեկ և միավորում էր անդամ պետությունների դեկանալություններին: Կազմակերպությունը այսօր էլ շարունակում է իր գոյությունը:

1963-2013թթ. Ֆրանսիան 31 ռազմական մերխուժում է իրականացրել Աֆրիկա: Պազմական գործողությունները տեղի են ունեցել Ֆրանկոֆոն պետություններում: Սա խոսում է այն մասին, որ ռազմական մերխուժումները նպատակ ունեին պահպանելու Ֆրանսիայի քաղաքական և տնտեսական շահերը Աֆրիկայում՝ ավելի ամրապնդելով

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

դիկտատորական ռեժիմը: Ֆրանսիայի ռազմական ներխուժումների հիմնական նպատակներն են՝

1. տնտեսական շահ,
2. իր քաղաքացիների պաշտպանում,
3. ընդայնել իր ազդեցության ոլորտները,
4. պայքարել ապստամբների դեմ,
5. ռազմական միջամտություններով բարձրացնել իր դերը համաշխարհային ասպարեզում.

Մեծ է ֆրանսիայի և Աֆրիկայի կապը նաև անվտանգության ոլորտում: Այն իրականացվում է պաշտպանական համաձյանագրերով, ռազմական աջակցության պայմանագրերով, Աֆրիկյան հրամանատարների վերապատրաստմամբ, ֆրանկոֆոն պետություններում ֆրանսիական հիմքի ստեղծմամբ և զինամթերքի առքուվաճառքով: 1990թ. Ֆրանսիան զինանոցներ ուներ Աֆրիկյան 22 պետություններում, [15] ռազմաքաներ՝ ստրատեգիական նշանակության այնպիսի պետություններում, ինչպիսիք էին՝ Զիրուրին, Սենեգալը, Կենտրոնական Աֆրիկյան հանրապետությունը, Կամերունը, Գարունը: Ֆրանսիայի ռազմական ուժերը, սակայն, կոնֆլիկտներին և պատերազմներին ակտիվ մասնակցություն չին ունենում: Նրանց դերն այն է, որ երրորդ պետության ազգեսիայի դեպքում պաշտպանեին Աֆրիկայի այն պետություններին, որոնք պաշտպանական պայմանագրեր ունեին Ֆրանսիայի հետ[16] Ֆրանսիայի ռազմական քաղաքականությունը Աֆրիկայի նկատմամբ ուներ երկու կարևոր նպատակ: Առաջնը՝ պաշտպանվել երրորդ պետության ազրեսիայի դեպքում. և երկրորդ՝ պահպանել համերաշխությունը ներքին ազրեսիայի դեպքում:

Անկախությունից հետո Ֆրանսիան մեծ դեր խաղաց Աֆրիկյան իր գաղուրներում ազգային բանակների ծևավորման հարցում: Համաձյան պաշտպանական պայմանագրերի, որոնք կնքվել էին Ֆրանսիայի և իր նախկին գաղութների միջև՝ Ֆրանսիան պարտավորվում էր պաշտպանել նրանց անվտանգությունը արտօքին և ներքին սպառնալիքների դեպքում: Պայմանագրերում նաև նշվում էր, որ Ֆրանսիան կարող էր միջամտել ռազմական գործողություններին՝ Աֆրիկյան պետությունների խնդրանքով: 1960-1963 թթ. Ֆրանսիան 12 անգամ ռազմական ներխուժման ննջարկեց Աֆրիկյան պետություններ[17]: Պաշտպանական պայմանագրերը Ֆրանսիայի համար հատուկ պայմաններ էին առաջարկում: Օրինակ՝ Աֆրիկյան պետությունները իրենց հումքը պարտավորվում էին վաճառքում միայն Ֆրանսիային և ոչ երբեք այլ երրորդ պետության:[18]

Ֆրանսիայի աֆրիկյան քաղաքականությունում հակասություններ կային: Օրինակ՝ Ֆրանսիան, քննադատելով Հարավային Աֆրիկյայի ապարտեհիդ մարտավարությունը, շարունակում էր տնտեսական և քաղաքական ոլորտում համագործակցությունը Հարավային Աֆրիկյայի հետ: Ֆրանսիան մեծ դեր խաղաց նաև Նիգերիա-Բիաֆրան պատերազմի հրահրման գործում՝ զինամթերք վաճառելով և տրամադրելով Բիաֆրային:[19]

1960-1994թթ. Ֆրանսիան ռազմական աջակցության 27 պայմանագրի ստորագրեց Աֆրիկյայի հետ: (Տե՛ս ս այլուսակ 2) Այդ պայմանագրերը Ֆրանսիայի ռազմական ներխուժմների համար իրավական հիմք էին հանդիսանում: Պաշտպանական պայմանագրերը ֆրանսիական ռազմական անձնակազմին հնարավորություն էին տալիս վարժեցնելու աֆրիկյան պետությունների բանակները[20]:

Աֆրիկյայում ռազմական ուժերի տեղակայման համար Ֆրանսիան ամենաքիչը 5 կարևոր պատճառ ուներ. առաջինը՝ Ֆրանսիան մեծ տնտեսական հետաքրքրություն ուներ Աֆրիկյայի նկատմամբ: Ֆրանսիան Աֆրիկյայի ամենամեծ առևտրային գործընկերն էր 1991-2008թթ.: 2008թ-ին արդեն Աֆրիկյայի ամենամեծ առևտրային գործընկերը դար-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ծավ Զինաստանը, բայց ամեն դեպքում Ֆրանսիան Աֆրիկայի համար մնում էր ԵՄ անդամներից ամենամեծ առևտորային գործընկերը: [21] Հատկանշական է, որ Աֆրիկան Ֆրանսիային էր մատակարարում բնական պաշարներ, ինչպիսին էր, օրինակ, ուրանը, բնական գազը և նավթը [22]:

Երկրորդ կարևոր պատճառն այն էր, որ Աֆրիկան Ֆրանսիայի համար լայն հարթակ էր Ֆրանսերենի և ֆրանսիական մշակույթի տարածման համար: Ֆրանսերենը և մշակույթը լայնորեն տարածված էին Ֆրանկոֆոն Աֆրիկայում: Ֆրանսիայի ռազմական ներկայությունը Աֆրիկայում նպատակ ուներ ամրապնդելու նաև Ֆրանսիայի մշակույթային շահերը: [23]

Երրորդ պատճառն արդեն վերաբերում է Ֆրանսիայի քաղաքական շահերին: Ֆրանսիան Աֆրիկան պետությունների հետ ամուր քաղաքական կապեր ուներ: Ֆրանսիան մեծապես ներգրավված էր Ֆրանկոֆոն Աֆրիկայի քաղաքական կյանքին: Վերջինս մեծ դեր խաղաց 2011 թ. մարտին Լիբիայում Քաղաքի վարչակարգի տապալման մեջ: 2011թ. ապրիլին Ֆրանսիան, համագործակցելով ՄԱԿ-ի հետ, պաշտոնանկ արեց նախկին նախագահ Իվորի Քուստին, Լաուրենտ Գրագրուն: Ֆրանսիայի քաղաքական ներգրավվածությունը Աֆրիկայում վկայում է իր քաղաքական շահերի մասին:

Աֆրիկայում Ֆրանսիայի ռազմական ներկայության չորրորդ պատճառը Աֆրիկայում Ֆրանսիայի քաղաքացիների անվտանգության ապահովումն էր. Աֆրիկայում ապրում էր ավելի քան 200.000 Ֆրանսիացի: Ֆրանսիայի քաղաքացիները կարևոր դեր էին խաղացի Աֆրիկայում Ֆրանսիայի տնտեսական շահերի ապահովման հացում:

Վերջին պատճառն այն էր, որ Աֆրիկայում Ֆրանսիայի ռազմական ներկայությունը կարևոր դեր էր խաղաց ռազմական դիվանագիտության, ռազմամթերքի առքուվածարքի, աֆրիկան խաղաղապահ ուժերի դեկավարման և անվտանգության պահպանան հարցերում:

1970-ական թթ. Ֆրանսիան ռազմակայաններ ուներ Աֆրիկան 7 պետություններում, այնինչ այսօր ընդհամենքն երկու ստրատեգիական նշանակության պետություններում՝ Գարոն և Ֆիբրուարի: Տնտեսական մարտահրավերների պատճառով Ֆրանսիան կրծատեց իր ռազմական ներկայությունը Աֆրիկայում: 2010թ-ին փակվեց ամենամեծ և ամենակարևոր ռազմակայանը Սենեգալում: [24]

Այսախով՝ մեծ էր Աֆրիկայի դերը Ֆրանսիայի համար և՝ քաղաքական, և՝ տնտեսական և՝ անվտանգության հարցերում: Ֆրանսիան ընդարձակվում էր իր ազդեցության ոլորտները Աֆրիկայում՝ միջազգային ասպարեզում իր ուժը մեծացնելու համար:

Աղյուսակ 1<sup>2</sup>

<b>Տարի</b>	<b>Երկիր</b>	<b>Նպատակ</b>
1964	Գարոն	Վերադարձնել նախագահին հեղաշրջումից հետո
1968-1972	Չար	Դարարեցնել հյուսիսային ապստամբությունը
1978-1980	Չար	Պաշտպանել կառավարությունը ապստամբությունը
1978	Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	Պաշտպանել Եվրոպական գերիներին ապստամբությունը
1979	Կենտրոնական Աֆրիկան Հանրապետություն	Իշխանությունից հեռացնել կայսր ժան Բեդել-Բոկասային

<sup>2</sup> [http://www.expatica.com/fr/news/french-news/france-africa-a-long-historyof-military-intervention\\_142434.html](http://www.expatica.com/fr/news/french-news/france-africa-a-long-historyof-military-intervention_142434.html)

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

<b>1983-84</b>	<b>Զար</b>	<b>Պահպանել ապստամբների դեմ գործող վարչակարգը</b>
<b>1986</b>	<b>Զար</b>	<b>Պաշտպանել կառավարությանը ապստամբներից</b>
<b>1986</b>	<b>Տողոն</b>	<b>Վերադարձնել նախազահին հեղաշրջումից հետո</b>
<b>1989</b>	<b>Կամերուն</b>	<b>Դադարեցնել հեղաշրջումը</b>
<b>1990</b>	<b>Գարոն</b>	<b>Պաշտպանել նախադագահ Օմար Բոնգոյի վարչակազմը</b>
<b>1990-1993</b>	<b>Ռուանդա</b>	<b>Տարհամել ֆրանսիացիներին ապստամբների հարձակման դեպքում</b>
<b>1991</b>	<b>Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն</b>	<b>Սորուտու Սեկու Սեզեի ռեժիմը պաշտպանելու համար</b>
<b>1992-94</b>	<b>Սոմալի</b>	<b>Սամանակցել ԱՄՆ-ու «Հոյսի վերականգնման» օպերացիային</b>
<b>1994</b>	<b>Ռուանդա</b>	<b>Սամանակցել «Թուրքական օպերացիային»</b>
<b>1995</b>	<b>Կամերուն</b>	<b>Դադարեցնել հեղաշրջումը և պահպանել վարչակազմը</b>
<b>1996-97</b>	<b>Կենտրոնական Աֆրիկան Հանրապետություն</b>	<b>Հեղաշրջումից հետո պահպանել կարգուկանոնը</b>
<b>1997</b>	<b>Կոնգոյի Հանրապետություն</b>	<b>Քաղաքացիական պատերազմի դեպքում երկրից տարհամել օտարերկրացիներին</b>
<b>1996</b>	<b>Կամերուն</b>	<b>Պահպանել Կամերունում ռազմական ներկայություն</b>
<b>1998</b>	<b>Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն</b>	<b>Տարհամել օտարերկրացիներին</b>
<b>2002</b>	<b>Իվորի Բոստ</b>	<b>Սամանակցել «Լիկորնի օպերացիային»</b>
<b>2003</b>	<b>Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն</b>	<b>Պահպանել գործող վարչակարգը</b>
<b>2008</b>	<b>Զար</b>	<b>Ուժեղացնել վարչակարգը և տարհամել օտարերկրացիներին</b>
<b>2011</b>	<b>Լիբիա</b>	<b>Սուհամար Քադաֆիի վարչակարգը տապալելու համար</b>
<b>2011</b>	<b>Իվորի Բոստ</b>	<b>«Լիկորն օպերացիային» մասնակցելու և Լաուրենտ Գրագորի վարչակարգը տապալելու համար</b>
<b>2013</b>	<b>Մալի</b>	<b>Պահպանել ապստամբների դեմ գործող վարչակարգը</b>

**Աղյուսակ 2**

<b>Դաշնակից պետություն</b>	<b>Տարի</b>	<b>Դաշնակից պետություն</b>	<b>Տարի</b>
<b>Բենին</b>	<b>1975</b>	<b>Մալի</b>	<b>1980</b>
<b>Բուրկինա Ֆասո</b>	<b>1961</b>	<b>Մալի</b>	<b>1985</b>
<b>Բուրունդի</b>	<b>1969</b>	<b>Մալի</b>	<b>1979</b>
<b>Կամերուն</b>	<b>1974</b>	<b>Մալի</b>	<b>1986</b>
<b>Կենտրոնական</b>	<b>1960</b>	<b>Մարոկկո</b>	<b>1994</b>

## ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԼՐԱՏՈՒ 2016

Աֆրիկա			
Չաղ	1976	Սիգերիա	1977
Կոմորոս	1978	Ռուանդա	1975
Կոնգո/Բրազզակի	1974	Սենեգալ	1974
Կոնգո/Կինշասա	1974	Սեյշելյան Կղզիներ	1979
Ջիբութի	1977	Տողոն	1963
Հասարակածային Գվինեա	1985	Թունիս	1973
Գարոն	1960	Ջիմբարկե	1992
Գվինեա	1985	Մադագասկար	1966
Իվոռի Բուստ	1961		

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Klein M., Slavery and Colonial Rule in French West Africa. Cambridge: Cambridge University, 1998, p. 22.
2. Iliffe J., Africans: The History of a Continent. Cambridge: Cambridge University, 2007, p. 195.
3. Manning P., Francophone Sub-Saharan Africa: 1880-1995. Cambridge: Cambridge University, 2004, pp. 75-6.
4. Fenwick L., British and French Styles of Influence in Colonial and Independent Africa: A Comparative Study of Kenya and Senegal. Washington, D.C.: American University, 2009, pp. 2-5.
5. Iverson A., From Eurafica to Multilateralism: The Europeanization of France's Africa Policy. Vancouver, B. C.: University of Brtish Colombia, 2007, pp. 16-17
6. Hrituleac A., The Effects of Colonialism on African Economic Development: A Comparative Analysis between Ethiopia, Senegal and Uganda. Aarhus: Aarhus University, 2011, p. 36.
7. Martin G., The Historical, Economic, and Political Bases of France's African Policy. The Journal of Modern African Studies, Vol. 23, No.2, 1985, p.191.
8. Fenwick, L., 2009. British and French Styles of Influence in Colonial and Independent Africa: A Comparative Study of Kenya and Senegal. Washington, D.C.: American University, pp. 2-5.
9. Martin G., The Historical, Economic, and Political Bases of France's African Policy, p 197.
10. Martin G., France's African Policy in Transition: Disengagement and Redeployment. Illinois: University of Illinois, 2000, pp. 7-13.
11. Korner H., The Franc Zone of West and Central Africa: A Satellite System of European Monetary Union. Intereconomics, Vol. 37, No. 4, 2002, pp. 199-201.
12. Martin G., France's African Policy in Transition: Disengagement and Redeployment, p. 9
13. Martin G., The Historical, Economic, and Political Bases of France's African Policy, p.197.
14. Hance W., The Geography of Modern Africa. (2nd ed.). New York: Columbia University Press, 1975, p. 85
15. Ogummola D., Redesigning Cooperation: The Eschatology of Franco-African Relations. Journal of social Sciences, Vol. 19, No. 3, 2009, p. 236
16. Staniland M., Francophone Africa: The Enduring French Connection. Annals of the American Academy of Political and Social Science, Vol. 489, 1987, p. 52.
17. Marks T. A., Djibouti: France's Strategic Toehold in Africa. African Affairs, Vol. 73, No. 290, 1974, p. 96
18. Martin G., The Historical, Economic, and Political Bases of France's African Policy, p.198:

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԻՌԱԾՈՒ 2016**

19. Pepy M. D., France's Relations with Africa. African Affairs, Vol. 69, No. 275, 1970, pp. 158-159.
20. Ibid., p. 90.
21. EUROSTAT. France's economic relations with Africa published by EUROSTAT, Revival of EU 27 trade in goods with Africa, STAT/10/178, 26 November 2010.
22. Siradag A., Causes, Rationales and Dynamics: Exploring the Strategic Security Partnership Between the European Union and Africa. Leiden: Leiden University, 2012.
23. Degang S. and Zoubir, Y., Sentry Box in the Backyard: Analysis of French Military Bases in Africa. Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Vol. 5, No. 3, 2011, p.90.
24. France 24, French Military Bases in Dakar to Close Doors. 2010. Available from: <http://www.france24.com/en/20100220-french-military-bases-dakar-close-doors> (Accessed 7 June 2013).

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ Աֆրիկայում Ֆրանսիայի գաղութային քաղաքականության ուղղությունները ժամանակակից հարությունները**

Աֆրիկան քաղաքական, տնտեսական և ստրատեգիական մեծ նշանակություն ուներ Ֆրանսիայի համար: Ֆրանսիան աֆրիկյան գաղութների նկատմամբ վարում էր քաղաքական և մշակույթային ծովածան քաղաքականություն: Ֆրանսիայի այս քաղաքականության նպատակն էր շահագործել Աֆրիկան և դրանով իսկ բարձրացնել Ֆրանսիայի միջազգային հեղինակությունը: Ֆրանսիայի այս քաղաքականությունը չէր հարգում աֆրիկյան մշակույթը ու սովորույթները: Այն արգելում էր աֆրիկյան լեզուները, մշակույթը, ինքնությունը: Ֆրանսիան Աֆրիկայի հետ կապը իրականացնում էի պաշտպանական պայմանագրերի, ռազմական միջամտությունների, ֆինանսական աջակցության քաղաքականության միջոցով: Ֆրանսիան իրականացրեց նաև դրամավարկային քաղաքականություն՝ նպատակ ունենալով ընդլայնել իր տնտեսական և քաղաքական ազդեցության ոլորտները Աֆրիկայում և, այդպիսով, մեծացնել իր դերը համաշխարհային քաղաքականությունում:

### **РЕЗЮМЕ Направления колониальной политики Франции в Африке Жанна Арутюнян**

**Ключевые слова:** Франция, Африка, колониальная политика, экономический интерес, политика ассимиляции, оборонные договоры, Франкофония, военное вмешательство

Африка была важна для Франции с точки зрения экономических, политических и стратегических интересов. Франция разработала культурно-политическую ассимиляцию по отношению к африканским колониям. Основной целью французской политики ассимиляции в Африке было использовать Африку и увеличить международный престиж Франции. Ведомая Францией политика принижала африканскую культуру и традиции, запрещала использование африканских языков. Франция сохранила свои отношения с Африкой через соглашения о сотрудничестве, о военном вмешательстве и политики финансовой помощи. Франция установила свою денежно-кредитную систему, с целью расширить свое

экономическое и политическое влияние в Африке, чтобы впоследствии увеличить свою роль в мировой политике.

## SUMMARY

### The Directions of French Colonial Policy in Africa

Zhanna Harutyunyan

**Keywords:** France, Africa, colonial policy, economic interest, assimilation policy, defense agreements, Francophon, military interventions.

Africa was important for France in terms of economic, political and strategic interests. France developed a cultural and political assimilation policy towards its African colonies. The main goals of the French assimilation policy in Africa were to exploit Africa and to increase France's international prestige. The assimilation policy of France in Africa did not respect African traditions, it banned African languages, culture. France maintained relations with Africa through "cooperation agreements", "military interventions", and "financial assistance policies". France established its monetary system to expand its economic and political influence in Africa and increase its world power.